

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Հ.2/4
ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐԿՐՈՐԴ ՆՏԱՇՐՁԱՆԻ ՉՈՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ

Ք.Երևան
Ժ.11.00

18 նոյեմբերի 2009թ.

Մասնակցում էին՝
Երևանի ավագանու 47 անդամներ

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետ Գագիկ Բեգլարյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. Օրակարգի նախագծի հաստատում:
2. Երևան քաղաքի 2009 թվականի բյուջեի եկամուտները, ծախսերն ու դեֆիցիտը /պակասուրդը/ ավելացնելու և Երևան քաղաքի 2009 թվականի բյուջեում վերաբաշխում կատարելու մասին:
3. Երևան քաղաքի 2009 թվականի բյուջեում վերաբաշխում կատարելու մասին:
4. Երևան քաղաքի ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների պահպանման և օգտագործման կանոնները հաստատելու մասին:
5. Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարներին լիազորություն պատվիրակելու և արտաքին գովազդի տեղաբաշխման /տեղադրման/ համայնքային կանոնները հաստատելու մասին:
6. Երևանի համայնքային ենթակայության «Շենգավիթի միջնակարգ դպրոց» կրթական հիմնարկի գործունեությունը դադարեցնելու մասին:
7. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N1-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին:
8. Երևանի համայնքային ենթակայության մի շարք հիմնարկներ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների վերակազմակերպելու մասին:
9. Գույքահարկի արտոնություն սահմանելու մասին:
10. ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Գալուստ Գալոյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին:
11. ՀԽՍՀ վաստակավոր ինժեներ, ԽՍՀՄ պատվավոր էներգետիկ Վլադիմիր Մարտինովի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին:

1. ԼՍԵՑԻՆ - Օրակարգի նախագծի հաստատման մասին:

ՈՐՈՇՎԵՑ - Հաստատել 18.11.2009թ. Երևանի ավագանու նիստի օրակարգը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ - կողմ - 47
դեմ - 0
ձեռնպահ - 0

Որոշումն ընդունվեց միաձայն

2. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքի 2009 թվականի բյուջեի եկամուտները, ծախսերն ու դեֆիցիտը /պակասուրդը/ ավելացնելու և Երևան քաղաքի 2009 թվականի բյուջեում վերաբաշխում կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի «Երևան քաղաքի 2009 թվականի բյուջեի մասին» N 2-Ա որոշմամբ հաստատված.

1.1. եկամուտների գումարն ավելացնել 2,988.7 հազ. դրամով,

1.2. ծախսերի գումարն ավելացնել 83,988.7 հազ. դրամով,

1.3. դեֆիցիտի (պակասուրդի) գումարն ավելացնել 81,000.0 հազ. դրամով:

2. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի «Երևան քաղաքի 2009 թվականի բյուջեի մասին» N 2-Ա որոշմամբ NN 1, 2, 3, 4, 5 և 6 հավելվածներում կատարել վերաբաշխում և փոփոխություններ՝ համաձայն համապատասխանաբար NN 1, 2, 3, 4, 5 և 6 հավելվածների:

3. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի «Երևան քաղաքի 2009 թվականի բյուջեի մասին» N 2-Ա որոշման N 7 հավելվածի NN 1, 5, 10, 11 և 12 աղյուսակներում կատարել փոփոխություններ համաձայն N 7 հավելվածի:

4. Հաստատել Երևան քաղաքի 2009 թվականի բյուջեով սույն որոշմամբ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 09 բաժնի 6 խմբի 1 դասով և տնտեսագիտական դասակարգման «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» հոդվածով նախատեսված ծախսերի բաշխումը՝ ըստ Երևան քաղաքի դպրոցների՝ համաձայն N 8 հավելվածի:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ - կողմ - 47
դեմ - 0
ձեռնպահ - 0

Որոշումն ընդունվեց միաձայն

3. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքի 2009 թվականի բյուջեում վերաբաշխում կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի «Երևան քաղաքի 2009 թվականի բյուջեի մասին» N 2-Ա որոշման NN 1, 2, 3 և 6 հավելվածներում կատարել վերաբաշխում և փոփոխություններ՝ համաձայն համապատասխանաբար NN 1, 2, 3 և 4 հավելվածների:

2. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի «Երևան քաղաքի 2009 թվականի բյուջեի մասին» N 2-Ա որոշման N 7 հավելվածի NN 1 և 11 աղյուսակներում կատարել փոփոխություններ համաձայն N 5 հավելվածի:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ - կողմ - 47
դեմ - 0
ձեռնպահ - 0

Որոշումն ընդունվեց միաձայն

4. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքի ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների պահպանման և օգտագործման կանոնները հաստատելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - Հաստատել Երևան քաղաքի ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների պահպանման և օգտագործման կանոնները՝ համաձայն հավելվածի:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ - կողմ - 47
դեմ - 0
ձեռնպահ - 0

Որոշումն ընդունվեց միաձայն

5. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարներին լիազորություն պատվիրակելու և արտաքին գովազդի տեղաբաշխման /տեղադրման/ համայնքային կանոնները հաստատելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ - Պողոս Փլավյանը:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի ավագանու 2009թ. հուլիսի 6-ի «Երևան քաղաքի քաղաքային նշանակության գովազդային և քաղաքաշինական գոտիները սահմանելու մասին» հ.13-Ա որոշմամբ սահմանված Երևան քաղաքի քաղաքային նշանակության գովազդային գոտում (քաղաքային նշանակության փողոցներում և դրանց անմիջապես հարող տարածքներում, ինչպես նաև քաղաքային նշանակության հրապարակներում և այգիներում) «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին համապատասխան՝ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն տալու լիազորությունը պատվիրակել Երևանի վարչական շրջանների ղեկավարներին:

2. Հաստատել Երևան քաղաքի վարչական սահմաններում արտաքին գովազդի տեղաբաշխման /տեղադրման/ համայնքային կանոնները՝ համաձայն հավելվածի:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ - կողմ - 47
դեմ - 0
ձեռնպահ - 0

Որոշումն ընդունվեց միաձայն

6. ԼՍԵՑԻՆ - Երևանի համայնքային ենթակայության «Շենգավիթի միջնակարգ դպրոց» կրթական հիմնարկի գործունեությունը դադարեցնելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - Դադարեցնել Երևանի համայնքային ենթակայության «Շենգավիթի միջնակարգ դպրոց» կրթական հիմնարկի գործունեությունը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ - կողմ - 47
դեմ - 0
ձեռնպահ - 0

Որոշումն ընդունվեց միաձայն

7. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N1-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ - Արման Վարդանյանը:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի «Երևան քաղաքի ավագանու կանոնակարգը ընդունելու մասին» N 1-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները՝

1) որոշմամբ ընդունված կանոնակարգի /այսուհետ՝ կանոնակարգ/ 1-ին հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերությունը վերջին նախադասությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Այդ պահից ավարտվում է նախորդ ավագանու լիազորությունների ժամկետը».

2) կանոնակարգի 2-րդ հոդվածի 2-րդ մասը «հիմնվում է» բառից հետո լրացնել «քաղաքական» բառով, իսկ «բազմակարծություն» բառից հետո՝ «իրավահավասարության և օրինականության» բառերով.

3) կանոնակարգի 4-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետից հանել «մշտական» բառը, իսկ կետը լրացնել «, առաջադրվել հանձնաժողովի նախագահի կամ նրա տեղակալի պաշտոններում» բառերով.

4) կանոնակարգի 5-րդ հոդվածի 1-ին մասի «ը» կետը «բացակայությունները» բառից հետո լրացնել «ավագանու նիստից» բառերով.

5) կանոնակարգի 6-րդ հոդվածի 1-ին մասը և 16-րդ հոդվածի 5-րդ մասը «աշխատակազմի քարտուղարը» բառերից առաջ լրացնել «քաղաքապետարանի» բառով.

6) կանոնակարգի 8-րդ հոդվածի 3-րդ մասի առաջին նախադասությունը «դիմումը» բառից հետո լրացնել «անձամբ» բառով.

7) կանոնակարգի 12-րդ հոդվածի 1-ին մասի «է» կետի «կոնսուլտացիաներ» բառը փոխարինել «քննարկումներ» բառով.

8) կանոնակարգի 14-րդ հոդվածի 1-ին մասը «նախապատրաստման» բառից հետո լրացնել «մասնագիտական եզրակացություններ և տեղեկանքներ տրամադրելու» բառերով.

9) կանոնակարգի 14-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» կետը «սոցիալական պաշտպանության» բառերից հետո լրացնել «արտաքին կապերի» բառերով.

10) կանոնակարգի 14-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» կետի «Ֆինանսավարկային, տնտեսական, առևտրի և ծառայությունների, տրանսպորտի և ճանապարհաշինության հետ կապված հարցերի մշտական հանձնաժողով» բառերը փոխարինել «Ֆինանսավարկային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողով» բառերով, իսկ «ճանապարհաշինություն» բառից հետո լրացնել «, էներգետիկայի և արդյունաբերության» բառերը.

11) կանոնակարգի 14-րդ հոդվածի 3-րդ մասի «դ» կետը «բնապահպանություն» բառից հետո լրացնել «բազմաբնակարան շենքերի և համատիրությունների» բառերով.

12) կանոնակարգի 14-րդ հոդվածի 4-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1-րդ մասով.

«4.1. Մշտական հանձնաժողովը կարող է իր կազմից ձևավորել աշխատանքային խմբեր՝ սահմանելով դրանց խնդիրները, գործունեության ժամկետներն ու կարգը և ընտրելով դրանց ղեկավարներին: Աշխատանքային խմբի կազմում հանձնաժողովի անդամներից բացի կարող են ընդգրկվել նաև խմբակցությունների փորձագետները:

Աշխատանքային խմբի գործունեությունը համակարգում է մշտական հանձնաժողովի նախագահը:

Իր գործունեության արդյունքների մասին աշխատանքային խումբը սահմանված ժամկետում զեկուցում է մշտական հանձնաժողովի նիստում: Աշխատանքային խմբեր կարող են ստեղծվել նաև մեկից ավելի հանձնաժողովների միջև: Հանձնաժողովները

իրենց կազմից ընտրում են համատեղ աշխատանքային խմբի անդամներին, որոնք իրենց կազմից ընտրում են ղեկավար:

Համատեղ աշխատանքային խմբի գործունեությունը համակարգում են համապատասխան մշտական հանձնաժողովների նախագահները:

Աշխատանքային խումբը և /կամ/ խմբերը գործում են մշտական հանձնաժողովի /հանձնաժողովների/ սահմանած ժամկետում և կարող է /են/ լուծարվել վաղաժամկետ՝ մշտական հանձնաժողովի /հանձնաժողովների/ որոշմամբ:».

13) կանոնակարգի 14-րդ հոդվածի 5-րդ մասում «հանձնաժողովը» բառը փոխարինել «հանձնաժողովի նախագահը» բառերով.

14) կանոնակարգի 15-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Ավագանին ժամանակավոր հանձնաժողով ստեղծելիս սահմանում է նրա խնդիրները և գործունեության կարգը».

15) կանոնակարգի 15-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-րդ մասով.

«2.1. Իր գործունեության արդյունքների մասին ժամանակավոր հանձնաժողովը սահմանված ժամկետում զեկուցում է ավագանու նիստում:».

16) կանոնակարգի 16-րդ հոդվածի 5-րդ մասը «փաստաթղթեր» բառից հետո լրացնել «, բացառությամբ օրենքով գաղտնիք համարվող տեղեկությունների:» բառերով, իսկ 6-րդ մասը՝ «դրույթներ» բառերից հետո լրացնել «որքանով որ դրանք չեն հակասում սույն հոդվածի դրույթներին» բառերով.

17) կանոնակարգի 16-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5.1-րդ մասով.

«5.1. Իր գործունեության արդյունքների մասին քննող հանձնաժողովը սահմանված ժամկետում զեկուցում է ավագանու նիստում:».

18) կանոնակարգի 17-րդ հոդվածի 5-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Եթե հանձնաժողովի անդամների ձայները հավասար են, ապա հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է:».

19) կանոնակարգի 18-րդ հոդվածի վերնագրում, 2-րդ, 5-րդ և 6-րդ մասերում «հանձնաժողովներ» բառից առաջ լրացնել «մշտական» բառը, իսկ 1-ին մասը՝ «հավասար է» բառից հետո լրացնել «ավագանու անդամների» բառերով.

20) կանոնակարգի 19-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ և 9-րդ մասերով.

«4. Մշտական հանձնաժողովի նախագահի և տեղակալի պաշտոններում թեկնածուների ընտրության հարցը քննարկվում է սույն կանոնակարգի 44-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով:

5. Մշտական հանձնաժողովի նախագահի, նրա տեղակալի լիազորությունները դադարում են, եթե՝

ա) օրենքով սահմանված կարգով դադարել են նրա՝ որպես ավագանու անդամի լիազորությունները.

բ) նա սահմանված կարգով դուրս է եկել մշտական հանձնաժողովի նախագահի և տեղակալի պաշտոններում իր թեկնածությունն առաջադրած խմբակցությունից.

գ) նա տվել է հրաժարական սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով:

6. Մշտական հանձնաժողովի նախագահը և տեղակալը հրաժարականի մասին դիմումը պաշտոնապես ներկայացնում են Երևանի քաղաքապետին, որն այն հրապարակում է ավագանու առաջիկա նիստում:

7. Եթե մշտական հանձնաժողովի նախագահի և /կամ/ տեղակալի պաշտոնում խմբակցության առաջադրած թեկնածուն չի ընտրվում, ապա անցկացվում են նոր

ընտրություններ, որոնց ժամանակ նոր թեկնածու կարող է առաջադրել դրա իրավունքն ունեցող խմբակցությունը:

8. Հանձնաժողովի նախագահը՝

ա) նախապատրաստում և վարում է հանձնաժողովի նիստերը.

բ) գումարում է հանձնաժողովի արտահերթ նիստ.

գ) հանձնաժողովի հաստատմանն է ներկայացնում հանձնաժողովի նիստի օրակարգի նախագիծը.

դ) համակարգում է աշխատանքային խմբերի աշխատանքը, այդ թվում՝ փորձագետների.

ե) ներկայացնում է հանձնաժողովը և համակարգում հանձնաժողովի աշխատանքները մյուս հանձնաժողովների և Աշխատակազմի հետ.

զ) ապահովում է հանձնաժողովի որոշումների կատարումը և հանձնաժողովին իրազեկում դրանց կատարման ընթացքի մասին.

9. Հանձնաժողովի նախագահի բացակայության կամ նրա պաշտոնը թափուր լինելու դեպքում նրան փոխարինում է տեղակալը, իսկ դրա անհնարինության դեպքում՝ հանձնաժողովի որոշմամբ լիազորված հանձնաժողովի անդամը:».

21) կանոնակարգի 23-րդ հոդվածի 2-րդ մասի «3-օրյա» թիվ և բառը փոխարինել «եռօրյա» բառով.

22) կանոնակարգի 25-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Հերթական նստաշրջաններն անցկացվում են յուրաքանչյուր ամիս առնվազն մեկ նիստ գումարելու /հրավիրելու/ միջոցով:».

23) կանոնակարգի 29-րդ հոդվածի 1-ին մասից հանել «աշխատակազմի քարտուղարը, կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարները, ավագանու խմբակցություններից մեկական փորձագետները» բառերը.

24) կանոնակարգի 31-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Չգրանցված ավագանին գրանցվում է իր խնդրանքով՝ դիմելով հաշվիչ հանձնաժողովի նախագահին կամ քարտուղարին».

25) կանոնակարգի 31-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Նիստն իրավագոր է, եթե նիստին ներկա են որոշում ընդունելու համար անհրաժեշտ թվով ավագանու անդամներ:».

26) կանոնակարգի 37-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերը լրացնել «, ինչպես նաև առանձին նախագծեր՝ երկրորդ ընթերցմամբ» բառերով.

27) կանոնակարգի 41-րդ հոդվածի 4-րդ մասի «24 ժամվա» թիվը և բառը փոխարինել «երեք օրվա ընթացքում» բառերով.

28) կանոնակարգի 41-րդ հոդվածի 4-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«Երևանի բյուջեն ընդունվում է սույն կանոնակարգի 37-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով: Երևանի բյուջեի եկամուտները նվազեցնող կամ ծախսերն ավելացնող որոշման նախագծերն ավագանին ընդունում է ավագանու անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:»:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ -

կողմ - 34

դեմ - 13

ձեռնպահ - 0

Որոշումն ընդունվեց ձայների մեծամասնությամբ

8. ԼՍԵՑԻՆ - Երևանի համայնքային ենթակայության մի շարք հիմնարկներ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների վերակազմակերպելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - Սույն որոշման N1 հավելվածով սահմանված Երևանի համայնքային ենթակայության հիմնարկները համարել վերակազմավորման ձևով վերակազմակերպված Երևանի համայնքային ոչ առևտրային կազմակերպություններ՝ հաստատելով ընկերությունները վերակազմակերպելու մասին Երևանի քաղաքապետի 2009 թվականի նոյեմբերի 2-ի հ.8757-Ա որոշումը:

2. Հաստատել սույն որոշման N1 հավելվածով սահմանված կազմակերպությունների կանոնադրությունները՝ համաձայն NN 2-23 հավելվածների:

3. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սահմանված կարգի համապատասխան իրականացնել կազմակերպությունների վերակազմակերպման հետ կապված անհրաժեշտ գործառույթներ և ձևակերպումներ:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ - կողմ - 47
դեմ - 0
ձեռնպահ - 0

Որոշումն ընդունվեց միաձայն

9. ԼՍԵՑԻՆ - Գույքահարկի արտոնություն սահմանելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - «ՌԱՕ ՄԱՐՍ» ՓԲ ընկերությանը /ՀՎՀՀ 01801249, ք. Երևան՝ Բաֆֆու 111/ տրամադրել գույքահարկի արտոնություն 5 մլն /հինգ միլիոն/ դրամի չափով նվազեցնելով սեփականության իրավունքով ընկերությանը պատկանող Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում գտնվող Բաֆֆու 111 գույքի /գույքահարկով հարկվող օբյեկտի/ 24.12.2008թ-ից մինչև 19.10.2009թ. հաշվարկված գույքահարկի չվճարված տույժի մնացորդը՝ 1 489 777 /մեկ միլիոն չորս հարյուր ութսունհինգ հազար յոթ հարյուր յոթանասունյոթ/ դրամ և ապառք՝ 3 510 223 /երեք միլիոն հինգ հարյուր տասը հազար երկու հարյուր քսաներեք/ դրամի չափով:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ - կողմ - 47
դեմ - 0
ձեռնպահ - 0

Որոշումն ընդունվեց միաձայն

10. ԼՍԵՑԻՆ - ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Գալուստ Գալոյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին:

ՈՐՈՇՎԵՑ - Տալ համաձայնություն ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Գալուստ Գալոյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Դեմիրճյան փողոցի 17-րդ շենքի շքամուտքի պատին փակցնելու համար:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ - կողմ - 34
դեմ - 0
ձեռնպահ - 13

Որոշումն ընդունվեց ձայների մեծամասնությամբ

11. ԼՍԵՑԻՆ - ՀԽՍՀ վաստակավոր ինժեներ, ԽՍՀՄ պատվավոր էներգետիկ Վլադիմիր Մարտինովի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին:

ՈՐՈՇՎԵՑ - Տալ համաձայնություն ՀԽՍՀ վաստակավոր ինժեներ, ԽՍՀՄ պատվավոր էներգետիկ Վլադիմիր Մարտինովի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Մոսկովյան փողոցի 31-րդ շենքի VII մուտքի պատին տեղադրելու համար:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ - կողմ - 34
դեմ - 0
ձեռնպահ - 13

Որոշումն ընդունվեց ձայների մեծամասնությամբ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

Կազմեց՝ Լ.Ալոյան